«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը գործընկերների հետ՝փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով

Հաստատություն՝ <<Աշտարակ համայնքի թիվ 1 Մանուշակ մանկապարտեզ>> ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Օվսաննա Մկրտչյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

2023

Բովանդակություն

1. Ներածություն.....3
2. Մանկավարժական աշխատողին ներկայացվող պահանջները, ժամանակակից մանկավարժի կերպար.....4
3. Մանկավարժության ժամանակակից մոտեցումները, դաստիարակ մանկավարժի գործունեություն…….....9
4. Դաստիարակների համագործակցության կառուցման առանձնահատկությունները կրթության գործում……12
5. Փորձի փոխանակման ձևերը ու մեթոդները..……13
6. Եզրակացություն.....15
7. Գրականության ցանկ.....16

Ներածություն

Մանկավարժի մասնագիտությունը ամենահին, բայց միևնույն ժամանակ պատվարժան մասնագիտություններից է։Հենց սկզբից սոցիալական փորձը փոխանցվել է ավագներից կրտսերներին համատեղ գործունեության բնականոն հարաբերություններով, աստիճանաբար ձևավորելով ավանդույթների։

Պատմության մեջ ձևավորվել են հարուստ մանկավարժական ավանդույթներ և փորձ,որը հիմք դրեց մանկավարժությունը ,որպես գիտություն։ Մանկավարժությունը, որպես գիտություն ձևավորվել 17 դարում Կոմեսկու կողմից և հետագայում այն ապրել է զարգացման փուլեր։

Նախադպրոցական կրթությունը մանկավարժության ճյուղերից մեկն է, որը ուսումնասիրում է նախադպրոցական դաստիարակության հայեցակարգերը, սկզբունքները, հնարավորությունները և ձևերը։ Հնարավորություն են տալիս ձևավորել մանկավարժության կողմից ընդունելի մասնագիտական համարժեք գործունեություն։

Նախադպրոցական կրթության արդյունավետությունը պայմանավորված է որակյալ մասնագետ կադրերի առկայությամբ։ Այսօր ժամանակակից հասարակությունը լուրջ պահանջներ է ներկայացնում մանկավարժական աշխատողին,ակնկալելով նրանից ստեղծագործական մոտեցում և պատասխանատվություն սեփական աշխատանքի հանդեպ։

Հետազոտական աշխատանքի նպատակը

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել մանկավարժական աշխատանքի գործունեությունը,համագործակցության կարողությունները, մեթոդները, մանկավարժական վարպետությունը,առողջ փոխհարաբերությունների ձևավորումը,փորձի փոխանակումը,աշխատանքի խնդիրները, բացահայտել գիտելիքները գործընկերների հետ կիսելու ձևերը։

Ուսումնասիրել մանկավարժական ընդլայնված փորձը,ուսումնասիրել մանկավարժական փորձի փոխանակման տարբերակները։

Մանկավարժական աշխատողին ներկայացվող պահանջները, ժամանակակից մանկավարժի կերպարը

Մանկավարժի գործընթացը իրենից ներկայացնում է երեխաների և մանկավարժների փոխներգործնություն, համագործակցություն, որի հիմքում ընկած է հաղորդակցումը։Մանկավարժական հաղորդակցումը մանկավարժի և երեխայի համագործակցությունն է,որի ընթացքում իրականացվում են ուսումնադաստիարակչական զարգացման խնդիրները։ Գիտելիքը կիսելու համար կարևոր է ունենալ անձնական փորձ և ձեռք բերել հմտություններ։

Մարդկային գործնեության բազմաթիվ ոլորտներ,այդ թվում `կրթությունը, սրընթաց զարգանում են տարբեր նորարությունների ներդրման շնորհիվ։Այսօր դաստիարակից պահանջվում է<<պատրաստ լինել ադեկվատ կերպով դիմավորելու յուրաքանչյուր մասնագիտական իրավիճակ, պատրաստ լինել վերապատրաստման արագ փոփոխվող միջավայրում զարգանալ>>։

Մանկավարժական հաղորդակցման ռազմավարությունը համագործակցությունն է։Մանկավարժական գործընթացը կազմակերպվում է հետևյալ սկզբունքներով.

- Կրթադաստիարակչական և զարգացման խնդիրների միասնություն.
- Երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում .
- Երեխաների նախասիրությունների և հետաքրքրությունների հաշվառում.
- Երեխաների և մանկավարժի փոխներգործնեություն.
- Փոխադարձ հարգանք և երեխաների իրավունքների հաշվառում.
- Երեխաների զարգացման առաջատար գործունեության հնարավորությունների առավելագույն օգտագործում.
    - Ազատ և ստեղծագործող անձնավորության ձևավորում.
    - Զարգացնող միջավայրի ստեղծում.

- Մանկավարժական գործընթացի պլանավորում և կառավարում.

Հենց այս պահանջների բավարարումն է, որ ստեղծել է նպաստավոր պայմաններ մանկավարժի և սաների հետ համագործակցության համար։

Նշված սկզբունքներից առավել արդիական է զարգացնող միջավայրի ստեղծումը։Զարգացնող միջավայրը նպաստում է յուրաքանչյուր երեխայի ստեղծագործական ներուժի բացահայտմանը և դրսևորմանը։Այն ապահովում է հավասար պայմաններ, բոլոր երեխաների զարգացման համար։Զարգացնող միջավայրի կառուցման մոտեցումները արտացոլում են համագործակցային դաստիարակության և անհատական հաղորդակցման հիմնական նպատակներն ու առավելությունները։ Զարգացնող միջավայրի կառուցման մանկավարժական պայմանները հատուկ ուշադրության կարիք ունեն։

1.Զարգացնող միջավայրի կառուցման ընթացքում համագործակցության պայմաններում կարևորում է հաղորդակցման որոշակի հեռավորությունը և դիրքավորման հավասարությունը։Առաջարկվում է միջավայրը կառուցել տարածական <<միասին>> սկզբունքով,որը լավագույնս ապահովում է երեխաների և մանկավարժի հաղորդակցումը։Կարևոր է նաև հաղորդակցման հեռավորությունը, ինչը երեխային օգնում է ավելի ազատ և անկաշկանդ շփվելու դաստիարակի հետ։Երեխան ազատ պետք է լինի հաղորդակցման ընտրության մեջ։

2.Նախադպրոցականի զարգացման հիմնական պայմանը նրա ակտիվության խթանումն է միջավայրի կառուցման ընթացքում։Նախադպրոցականն ընդունակ է ինքնուրույն ստեղծելու իր առարկայական տարածական միջավայրը,հետևաբար անհրաժեշտ է պարբերաբար խրախուսել, ոգևորել երեխայի ակտիվությունը։

3.Կայուն զարգացնող միջավայրը նախադպրոցականի զարգացման հիմնական խթանն է , կարևորագույն մանկավարժական պայմանը։Երեխան այդ կայուն միջավայրում պետք է իրավունք և հնարավորություն ունենա փոխել և լուծել տարբեր

խնդիրներ։Երեխայի կյանքի և գործունեության տարածքը մանկապարտեզում պիտի խթանի երեխայի ակտիվության գործունեությունը բոլոր ոլորտներում։Այն կառուցվում է ճկունության սկզբունքով։Տարածքի տարբեր ֆունկցիոնալ միավորներ չպետք է խանգարեն միմյանց, հնարավորություն տալով բոլոր երեխաներին զբաղվելու գործունեության ցանկալի ձևերով։Ժամանակակից մանկապարտեզը խմբասենյակից և մարզադահլիճից բացի պետք է ունենա կահավորված երաժշտական, թատերական սենյակներ, փորձարարության համար նախատեսված ստեղծագործական արհեստասենյակներ , օժանդակ հարմարություններ։Խմբասենյակը պիտի պարունակի բազմաֆունկցիոնալ անկյուններ, հանգստի անկյուններ,որտեղ կարելի է առանձնանալ, մտորել կամ ուղղակի հանգստանալ։

4.Զարգացնող միջավայրի կառուցման հաջորդ սկզբունքը հուզազգացմունքային միջավայրի ապահովումն է ուղղված դրական հուզական մթնոլորտի ստեղծմանը։ Հասարակական կյանքը մանկապարտեզում պիտի հագեցած լինի արվեստի նմուշների հետ հաղորդակցմամբ,որոնք փոխանցում են մարդկության գեղագիտական և բարոյական արժեքները։ Ճաշակով կահավորված կենսական միջավայրն իր մեջ պարունակում է դաստիարակչական հզոր ներուժ։

5.Զարգացնող միջավայրը կոչված է ապահովելու հավասար պայմաններ տարբեր սեռի երեխաների զարգացման համար։Այն կառուցվում է ոչ միայն տարիքային առանձնահատկությունների այլև սեռային տարբերությունների պարտադիր հաշվառման հիման վրա։ Մանկապարտեզում երեխան հնարավորություն պիտի ունենա դրսևորելու սեռին բնորոշ հատկություններ և հարաբերություններ։

6.Զարգացնող միջավայրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել կենսական միջավայրի երկակի բնույթ,որը պայմանավորված է այդ միջավայրում ապրող և գործող մարդկանց վերաբերմունքով, սեփական տարածք է, փակ է տվյալ տարածքում չապրող մարդկանց համար,քանի որ կոնկրետ երեխաների և

մեծահասակների խմբասենյակ է, ուր մուտք գործելիս անհրաժեշտ է թույլտվություն հարցնել նրանցից։Միևնույն ժամանակ զարգացնող միջավայրը բաց տարածություն է , որն ընդունում է բարի մարդկանց։Զարգացնող միջավայրի կառուցման ընթացքում բաց լինելու պահանջը բխում է հետևյալ ակզբունքներից.

-Բնության և մարդու ներդաշնակ գոյատևման.

-Երեխայի և հասարակության ներդաշնակ համագործակցության.

-Մշակույթային արժեքների ներգրավման.

-Երեխայի ներաշխարհի և միջավայրի ներդաշնակության։

Առաջին սկզբունքը պահանջում է բնության հանդեպ բաց լինելու անհրաժեշտությունը։Խորհուրդ է տրվում մանկապարտեզում ստեղծել կանաչ անկյուններ, ձմեռային այգիներ,կանաչապատված բակեր։Մանկապարտեզի բակում երեխաների հետ համատեղ կարող են ապրել կենդանիներ,որոնց խնամքը ունի բացառիկ դաստիարակչական նշանակություն։Երկրորդ սկզբունքը հեռանկարային է, կատարյալ հասարակության լիարժեք անձնավորությունների ձևավորում,որը բնութագրում է հասարակությանը՝ աշխարհի հանդեպ։ Երրորդ սկզբունքը ենթադրում է մշակույթային արժեքների լայն կիրառում և կոչվում է <<դեպի մշակույթ>> տանող սկզբունք։Վերջին մոտեցումը քարոզում է երեխայի ներաշխարհի բացահայտում և նրա ներքին <<ես>> - ի կառուցում։

Այսպիսով նախադպրոցական կրթության բարեփոխումները ենթադրում են մանկավարժական նորարարություններ, որոնք իրենցից ներկայացնում են նախադպրոցական կրթության համակարգի նոր ռազմավարությամբ պայմանավորված մանկավարժական աշխատանքի փոփոխություններ հետևյալ ուղղություններով.

- Կրթության շեշտադրումներ և բովանդակություն.

- Երեխա -մանկավարժ փոխհարաբերություններ.

- Ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման ձևերը և մեթոդները.

Նախադպրոցական դաստիարակության ծրագրերը մշակվում են տարբերակման սկզբունքով:

-Համալիր՝ երեխայի զարգացման բոլոր կողմերը ներառող.

-Մասնակի՝ երեխայի զարգացման առանձին ուղղություններ հաշվառող:Գործում են նաև հեղինակային ծրագրեր: Մանկավարժական նախագծման նպատակը մանկավարժական համակարգի, գործընթացի, իրադրությունների մշակումն է, դրանց հնարավոր արդյունքների նախատեսումը: Մանկավարժական համակարգի նախագծումը բաղկացած է երեք փուլից:

Առաջին մանկավարժական համակարգի մոդելավորման փուլն է:Մանկավարժական մոդելն իրենից ներկայացնում է մանկավարժական համակարգի ընդհանուր գաղափարի հիման վրա կառուցված մանկավարժական մոտեցումների միասնություն, տրամաբանական հաջորդականություն:

Երկրորդ փուլ՝ մանկավարժական նախագծի մշակման փուլն է,որն ենթադրում է տեսական մոդելի գործնական կիրառման մանկավարժական եղանակների առանձնացում:

Երրորդ փուլը՝ մանկավարժական գործընթացի կառուցումն է, որի նպատակը մշակված նախագծի մասնավորեցումն է մանկավարժական տեխնոլոգիաների մշակումը՝ կոնկրետ մանկավարժական իրադրություններում կիրառելու համար:

Նախադպրոցական կրթության համակարգը նախատեսված է մանկավարժական գործընթացի համագործակցային մոդելի կատարելագործում, նախադպրոցական

կրթության համալիր և մասնակի ծրագրերի, նորարարական տեխնոլոգիաների մշակում։

Մանկավարժության ժամանակակից մոտեցումները դաստիարակ մանկավարժի գործունեությունը

Ժամանակակից մանկավարժությունը մարդու մասին գիտությունների համագարգի մի մասն է կազմում,որը ուսումնասիրում է մարդու զարգացումը,նրա ներաշխարհը։Մանկավարժությունը ծագել է ,որպես գիրություն դաստիարակության մասին։Այսօր մանկավարժության ուսումնասիրության առարկան կրթությունն է;Մանկավարժությունը առաջարկում է դրույթներ և ստեղծագործական ,որոնողական աշխատանք,որոնք թույլ են տալիս իրականացնել երեխայի դաստիարակությունը, ձևավորելով նրա անձնային որակները։ Մանկավարժական ժամանակակից մոտեցումները պահանջում են, որպեսզի դասընթացը իր մեջ ներառի տեսական և տեխնոլոգիական կառույցներ։

Այսպիսով մանկավարժությունը գիտություն է անձի ձևավորման ու զարգացման օրինաչափությունների, կրթության, ուսուցման և դաստիարակության ձևերի, մեթոդների ու բովանդակության մասին։

Մանկավարժությունը, որպես գիտություն զբաղվում է սերունդների կրթությամբ,դաստիարակությամբ,զարգացման հիմնախնդիրներով։Երեխաները մասնակցելով մեծահասակների աշխատանքին ձեռք են բերում կենսափորձ։

Մանկավարժի խնդիրն ու առաքելությունը մարդկային էության բացահայտումն է և հոգու կառուցումը։Մանկավարժը կատարում է կարևորագույն գործառույթ նրան է վստահված աճող սերնդի զարգացման աստիճանի գնահատման և վերահսկման

պատասխանատու գործը։Պատասխանատու լինելով ողջ հասարակության առջև մանկավարժը անընդհատ շտկման և վերակառուցման է ենթարկում իր կողմից կազմակերպվող մանկավարժական գործունեությունը։Մանկավարժական գործունեությունը մանկավարժի-դաստիարակի մասնագիտական գործիքն է;Մանկապարտեզի դաստիարակ- մանկավարժին ներկայացվող պահանջները պայմանավորված են անձի կայացման գործընթացում նախադպրոցական տարիքի արժեվորմամբ ,նախադպրոցական կրթության, նշանակության և մասնագիտական պատասխանատվության գիտակցմամբ։

Մանկավարժը ջանում է ղեկավարել երեխաներին հրամայելով և հրահանգների ցուցումներ տալով, նկատողություններ անելով ու անվերջ ուղղելով նրանց։Նախադպրոցական մանկության շրջանում են ձևավորվում անձնային կարևորագույն հատկությունները,որոնք հնարավորություն են տայիս երեխային ինքնահաստատվելու հասարակական կյանքում։Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացմանը բնորոշ են մի շարք օրինաչափություններ, որոնցից կարևորվում են՝ նախադպրոցականի ֆիզիկական և հոգեկան զարգացման պայմանավորվածությունը շրջապատող միջավայրով։ Կարևորվում է նախադպրոցական կրթության ոլորտի մանկավարժի դերը,որը կոչված է իրականացնելու մի շարք մասնագիտական գործառույթներ.

-Երեխաների կյանքի և առողջության համար անհրաժեշտ է ապահով պայմանների ստեղծում.

-Երեխաների զարգացման և դաստիարակության համար մանկավարժական պայմանների ստեղծում.

-Ուսումնադաստիարակչական գործունեության կազմակերպում և իրականացում

-Երեխայի ինքնուրույն գործունեության կազմակերպում և ղեկավարում

-Ընտանիքների հետ ծրագրերի մշակում ,փոխադարձ կապերի ձևերի ապահովում—

-Մանկավարժական գիտելիքների տարածում

-Համապատասխան պայմանների ստեղծում

Մանկավարժական գործունեությունը մանկավարժից պահանջում է որոշակի ընդունակությունների առկայություն, որոնք պայմանականորեն բաժանվում են հինգ խմբի.

1.Գիտելիք

2.Կառուցողական

3.Հաղորդակցման

4.Կազմակերպչական

5.Հատուկ

Դաստիրակությունը պահանջում է մանկավարժներից նախնական ածխատանք, հատուկ արարողության նախապատրաստում և պարունակում է ուսուցման տարրեր։ Դաստիարակ- մանկավարժ,ծնողը այն մարդիկ չեն ովքեր ինչ որ բան են սվորեցնում, այլ մարդիկ են ովքեր շնչում են, որ սանը ինքնուրույն բացահայտի,հայտնագործի ու ապրի իմացումով։ Ուսուցումը սանի համար հայտնագործությունների անվերջ շղթա է, որով ապրում է երեխան։

Դաստիարակների համագործակցության կառուցման առանձնահատկությունները և կարևորությունը

Դաստիարակության գործում միշտ ,այսօր առավելապես, կարևորվել է երեխայի նկատմամբ ծնողի ճիշտ դրսևորումները։Առանց ընտանեկան ճիշտ դաստիարակության մանկապարտեզում երեխային կառավարելն ու վերահսկելը անչափ դժվար է մանկավարժական աշխատողի համար։Ծնողները դաստիարակի անմիջական օգնությամբ պարտավոր են սիրո զգացմունքներ սերմանել։

Այսպիսով կարծում ենք,որ որևէ կերպ չի կարելի անտեսել ծնողին։Եթե վերջինս չի պատկերացնում սեփական երեխայի դաստիարակության հարցերում իր կարևոր դերակատարումը,ապա հարկավոր է, որ դաստիարակը սկսի հենց այդ կետից՝ծնողին բերել համագործակցային դաշտ։ Դաստիարակը նախակրթական գործընթացի հիմնական կազմակերպիչն ու իրականացնողն է, մեծագույն պատասխանատվություն է կրում երեխայի զարգացման գործում ։Երեխայի զարգացման և դաստիարակության գաղափարն է միավորում ծնողներին և դաստիարակներին, ուստի համագործակցությունը պետք է ուղղված լինի հենց այդ գաղափարի արդյունավետությանը։

Կարևոր հանգամանք է երեխայի կարգավիճակը ընտանիքում։ Այս հարցը նույնպես պետք է դնել ընտանիք-կրթօջախ համագործակցության ակունքում։ Այս մասով իր կարևոր դերակատարումը ունի նախադպրոցական հաստատության դաստիարակը, ով համագործակցելով ծնողների հետ, ուսումնասիրում է երեխաների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկությունները, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը երեխայի վրա, նրանց սոցիալական միջավայրը, շփումները, հետաքրքրությունները, հաղորդակցման դժվարությունները, սոցիալական միջավայրում հարմարման և պաշտպանվածության մակարդակը։Դաստիարակը երեխայի ընտանիքը ճանաչում է հենց նրա աչքերով,երեխայի վարքը հաճախ դաստիարակի ներկայությամբ կարող է տարբեր լինել։Շատ կարևոր է կողմերի միջև վստահությունը և կապը ,նրանք մշտապես

տեղեկություն կունենան երեխայի վարքի,կրթական ձեռք բերումների,հասակակիցների հետ շփման խնդիրների մասին։

Փորձի փոխանակման ձևերը ու մեթոդները

Կրթության նպատակները և բովանդակության իրականացման համար անհրաժեշտ է կիրառել որոշակի մեթոդներ, եղանակներ, ձևեր, հնարներ։Ուսուցման մեթոդները դաստիարակի և երեխայի աշխատանքի այն ձևերն են, որոնք խթանում են գիտելիքների ձեռք բերումը,իմաստավորել դրանք, զարգացնել երեխայի մոտ կարողություններ, հմտություններ,զարգացնել նրանց ընդունակությունը։Ուսուցման ամեն մի մեթոդ ունի իր նպատակը և իրականացման միջոցները։Նախադպրոցական մանկավարժության մեջ երաժշտությունը անփոխարինելի է, այն երեխաների զգացմունքների արձագանքն է, որն ուղեկցվում է ողջ կյանքում։

Փոխայցելություններ այլ մանկապարտեզներ, միջոցառումների կազմակերպում, երեխաները կունենան հետաքրքիր պարապմունքներ։Յուրաքանչյուր նոր բան ավելի հետաքրքիր կդարձնի նրանց օրը։Փոխհամագործակցությունը կնպաստի նոր գիտելիքների ձեռք բերմանը։

Համագործակցել գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով՝ ապահովելով մանկավարժական աշխատողների միջև բարի դրացիական, գործընկերային հարաբերություններ։

Դաստիարակության մեթոդները դաստիարակի և երեխաների հատուկ կազմակերպված փոխազդեցությունն է մանկավարժական խնդրի լուծման նպատակով դաստիարակվողների գիտակցության, զգացմունքների , վարքի վրա ազդելու ճանապարհով։

Դաստիարակության գործընթացը իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ՝մեթոդը նպատակին հասնելու միջոց է, ուղի։ Ուսուցման մեթոդների ընտրությունը պայմանավորված է դիդակտիկ խնդիրների նպատակաուղղվածությամբ, այն արտացոլում է մանկավարժի և երեխայի փոխներգործունեության ընթացքը։

Դաստիարակության մեթոդները բաժանվում են երեք խմբի

1.Խոսքային - գիտելիքի աղբյուրը խոսքն է։

2.Դիտողական -գիտելիքը ձեռք է բերում դիտարկման միջոցով։

3.Գործնական - գիտելիքը պրակտիկ փորձի արդյունք է

Պարապմունքների կազմակերպումը մեծ վարպետություն է պահանջում մանկավարժից։

Արժեքավոր են համարվում համալիր բնույթի պարապմունքները, որոնց ընթացքում երեխաներին ներգրավում են գործունեության մեջ։Ուսուցման արդյունավետ ձև է էքսկուրսիան, որը նախապես պլանավորվում և անցկացվում է հատուկ մեթոդիկայով , այն բաղկացած է երեք մասերից՝ նախապատրաստական,հիմնական, անփոփոխ։

Նախադպրոցական ուսուցման հիմնական ձևը դիդակտիկ խաղն է, որը աստիճանաբար փոխարինվում է ուսուցման կազմակերպմանը։

Ուսուցման գործընթացը շարունակվում է նաև պարապմունքներից և դիդակտիկ պարագաներից դուրս ։

Եզրակացություն

Կատարելով հետազոտական աշխատանք եկա եզրահանգման: Նախադպրոցական հաստատությունում մանկավարժական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու համար պետք է, ոչ միայն տիրապետել մասնագիտական գիտելիքներին այև ունենան վառ երևակայություն, դրսևորել նախաձեռնողականություն, կարողանան հմտորեն համագործակցել գործընկերների հետ:

Այսօր համագործակցության ձևերը բազմազան են՝ սկսած ավագ գործընկերների հետ համագործակցության և վերապատրաստումների դասընթացներին մասնակցելը: Այդպիսի համագործակցության արդյունքում դաստիարակը ձեռք է բերում փորձ, գիտելիք և դրանք հաջողությամբ կիրառում է իր աշխատանքային գործընթացում:

Վերը նշված կետերը իրագործելու դեպքում աշխատանքը կունենա դրական արդյունք: Յուրաքանչյուր աշխատող պետք է ընդունի և հասկանա, որ իր վրա մեծ պատասխանատվություն է դրված: Պետք է նպատակային օգտագործվի ժամանանակը :

Գրականության ցանկ

1. Ա. Ա. Մարության, Ա.Մ. Դալաքյան

<<Նախադպրոցական մանկավարժություն>>

2. Հ.Հ. Պետրոսյան <<Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ>>

3. Յու. Ա. Ամիրջանյան , Ա. Ա.Սահակյան <<մամկավարժություն>>

4.Ա. Չիբուխյան <<Ուսուցման մեթոդիկան ձեռնակ>>